ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2021 թվական **N ____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման.

1) N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «3. Բաժիններ» գլխի 6-րդ կետի «Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» բառերը փոխարինել «Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բաժին» բառերով

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «3. Բաժիններ» գլուխը լրացնել նոր 10-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) Երիտասարդության հարցերի բաժին».

2) N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

«I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» տողը շարադրել նոր խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
-	**Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բաժին**				
1	բաժնի պետ	1	442,000		442,000
2	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
3	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	8			2,431,000

4) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողից առաջ ավելացնել «Երիտասարդության հարցերի բաժին» նոր տող.

Հ/Հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
-	**Երիտասարդության հարցերի բաժին**				
1	բաժնի պետ	1	442,000		442,000
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000

3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**			**1,013,200**

5) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «631,5» և «213794500.0» թվերը փոխարինել համապատասխանաբար «635.5» և «215134100.0» թվերով:

6) «Ամբողջը» տողում «1995.5» և «603090900.0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1999.5» և «604430500.0» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետև՝ Նախագիծ) առաջարկվում է կառուցվածքային փոփոխություններ կատարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ «Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» (այսուհետ՝ Բաժին) կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանելով «Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բաժին», փոփոխելով դրա հաստիքակազմը և ստեղծելով «Երիտասարդության հարցերի բաժին» անվանումով նոր կառուցվածքային ստորաբաժանում:

Ներկայումս Բաժինը հանդիսանում է սպորտի և երիտասարդության բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովող պատասխանատու ստորաբաժանում: Բաժնի ենթակայությամբ գործում է 41 մարզական կազմակերպություն (ներառյալ՝ «Երևանի սպորտկոմիտե» ՀՈԱԿ-ը), որից 31-ի կառավարումը պատվիրակված է վարչական շրջանների ղեկավարներին: Ներկայումս բաժինն ունի 7 աշխատակից՝ 1 բաժնի պետ, 1 գլխավոր մասնագետ, 2 առաջատար մասնագետ և 3 առաջին կարգի մասնագետ:

2021 թվականի հունիս - օգոստոս ժամանակահատվածում Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հետ համագործակցությամբ «UN RCS-COVID MPFT» ծրագրի շրջանակում իրականացվել է սպորտի ոլորտում Երևանի քաղաքապետարանի կառավարման համակարգի և մարզադպրոցների գործունեության փորձագիտական ուսումնասիրություն, որին մասնակցել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, մարզադպրոցների տնօրեններ: Ուսումնասիրությամբ հաստատվել է, որ սպորտի ոլորտում առկա են կառավարման լուրջ խնդիրներ, որոնք խոչընդոտում են քաղաքապետին վերապահված լիազորությունների լիարժեք իրականացմանը, համայնքային մարզական կազմակերպությունների մատուցած

ծառայությունների՝ պատշաճ որակի ապահովմանը, ոլորտի արդյունավետ կառավարմանը և զարգացմանը:

Նշանակալի խնդիր է նաև ստորաբաժանման կառուցվածքում գործող երիտասարդության հարցերի ոլորտի առարկայական և նպատակային անհամատեղելիությունը սպորտի ոլորտի հետ, ինչպես նաև երիտասարդության հարցերով զբաղվող մարդկային ռեսուրսների խիստ սահմանափակությունը (բաժնում ներկայումս երիտասարդության հարցերով զբաղվում է մեկ առաջատար մասնագետ՝ առանց հստակ գործառույթների տարանջատման):

Բաժնի գործառութային ուսումնասիրությունը և վերլուծությունը փաստում են, որ

- անհրաժեշտ է լրամշակել Բաժնի կանոնադրությունը, ինչը բխում է ՀՀ օրենսդրությամբ («Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքներով) սպորտի ոլորտում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունները և դրանցից բխող Բաժնի գործառույթները լիարժեքորեն ամրագրելու անհրաժեշտությունից,
- աշխատակիցների միջև չկա Բաժնի կանոնադրությունից և ոլորտի արդյունավետ կառավարումից բխող՝ աշխատանքի գործառութային բաժանում,
- աշխատակիցների իրականացրած փաստացի գործառույթները հաճախ չեն համապատասխանում նրանց առկա պաշտոնի անձնագրերով սահմանված լիազորություններին, ինչը հետևանքն է Բաժնի կառուցվածքում համայնքային ծառայության համապատասխան պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման, պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակի ոչ ճշգրիտ գնահատման և դասակարգման,
- Բաժինը հզորացման և աշխատակազմի կարողությունների զարգացման խիստ կարիք ունի, ինչը կարևոր նախապայման է ոլորտի և համայնքային ենթակայության մարզադպրոցների արդյունավետ կառավարման և զարգացման համար:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Բաժնի օպտիմալ կառուցվածքի ձևավորման և ոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար լրամշակվել է Բաժնի

կանոնադրությունը, գնահատվել են դրանից բխող Բաժնի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները՝ համապատասխան մեխանիզմների միջոցով գնահատելով նախատեսվող պաշտոնները և դասակարգելով համայնքային ծառայության պաշտոնների համապատասխան խմբերում, նախաձեռնվել է աշխատակազմի կարողությունների զարգացման վերապատրաստումների ծրագրի մշակում:

Աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարաչափ բաշխելու, համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում տարբերակված և առանձնահատկությունները սահմանող գործառույթների ամրագրմամբ համակարգված և մասնագիտացված գործունեություն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվում է.

1. Բաժինը վերակազմակերպել՝ այն վերանվանելով «Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բաժին», իսկ երիտասարդության ոլորտում քաղաքապետի լիազորությունների իրականացման ապահովումը վերապահել առանձնացված նոր՝ երիտասարդության հարցերի բաժնին:

2. Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բաժնին վերապահված գործառույթները իրականացնել համայնքային ծառայության թվով 8՝ 1 բաժնի պետ, 2 գլխավոր, 5 առաջատար մասնագետների պաշտոնները զբաղեցնող անձանց ներգրավմամբ, որոնցից.

ա. 1 գլխավոր և 1 առաջատար պաշտոններ զբաղեցնող մասնագետներին առաջադրվելու է սպորտի ոլորտի բարձրագույն մասնագիտական կրթության պահանջ՝ հաշվի առնելով, որ նրանք կազմակերպելու և վերահսկելու են Բաժնի կողմից կազմակերպվող միջոցառումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Բաժնի ենթակայությամբ գործող «Երևանի սպորտկոմիտե» ՀՈԱԿ-ի լուծարմամբ պայմանավորված վերջինիս կողմից իրականացված՝ միջոցառումների/գործուղումների կազմակերպման, հավաքական թիմերի ձևավորման և Բաժնի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններին մեթոդական աջակցության տրամադրման գործառույթները նախատեսվում է այսուհետ իրականացնել Բաժնի միջոցով:

բ. 1 գլխավոր մասնագետի պաշտոն զբաղեցնող մասնագետի առաջադրվելու է սպորտի ոլորտի բարձրագույն մասնագիտական կրթության պահանջ և նրան վերապահվելու են սպորտի ոլորտի մշտադիտարկման, պետական քաղաքականությանը համահունչ զարգացման ծրագրերի կազմման, պետական գերատեսչություններից

ստացված գրությունների վերաբերյալ մասնագիտական կարծիքի և առաջարկությունների տրամադրման, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների, ինչպես նաև իրավական ակտերի կազմման գործառույթները:

գ. 1 առաջատար մասնագետի պաշտոն զբաղեցնող մասնագետի առաջադրվելու է ֆինանսների կամ տնտեսագիտության ոլորտի բարձրագույն կրթություն՝ Բաժնի կողմից կատարվող գնումների պատշաճ կազմակերպմանը, ինչպես նաև Բաժնի լիազորություններից բխող ֆինանսական բնույթի գործառույթներին մասնակցելու և աջակցելու նպատակով՝ հաշվի առնելով, որ Բաժինը տարվա ընթացքում իրականացնում և իրականացնելու է բազմաթիվ միջոցառումներ/գործուղումներ և գույքի ձեռքբերում մարզադպրոցների համար, ինչպես նաև մասնակցում է իր ենթակայության կազմակերպությունների նախահաշիվների հաստատման գործընթացին:

դ. 3 առաջատար մասնագետի պաշտոններ զբաղեցնող մասնագետներին վերապահվելու են բաժնի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների ընթացիկ գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովմանը միտված և վարչական շրջանների ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների ընթացիկ գործունեության աջակցման գործառույթներ, ոլորտին առնչվող տեղեկության տրամադրման, հավաքման և վերլուծության գործառույթներ:

3. «Երիտասարդության հարցերի բաժին» անվանումով նոր կառուցվածքային ստորաբաժանման մեջ նախատեսել համայնքային ծառայության թվով 3՝ 1 բաժնի պետ, 1 գլխավոր և 1 առաջատար մասնագետներ:

Երիտասարդության հարցերի առանձնացված բաժնի ստեղծումը հիմնավորվում է հետևյալով.

Սպորտի և երիտասարդության հարցերի բաժինների միավորումը կատարվել է առանց բավարար ուսումնասիրության և հեռանկարային առումով արդարացված հիմնավորումների: Առավելապես մանկապատանեկան սպորտի ոլորտի խնդիրներով զբաղվող ստորաբաժանման գործառույթները որևէ ուղղակի փոխկապվածություն չունեն երիտասարդության հարցերի հետ, իսկ առկա առնչությունները ավելին չեն, քան Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բազմաթիվ այլ ստորաբաժանումների գործառութային փոխկապվածությունը երիտասարդության հարցերի հետ: Բաժնում ներկայումս երիտասարդության հարցերով զբաղվում է մեկ առաջատար մասնագետ, ով

գործառութային և մասնագիտական աջակցություն չի ստանում և չի կարող ստանալ բաժնի՝ սպորտի ոլորտի մասնագետներից։

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրներից է համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը։ Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարի լիազորություններից է երիտասարդական կենտրոնների կազմակերպումն ու կառավարումը, երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեության կազմակերպումը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները։ Միաժամանակ, համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար և աջակցել համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը։

Երիտասարդության հարցերի ոլորտում Բաժնի գործող անարդյունավետ կառուցվածքը և մարդկային ռեսուրսների խիստ սահմանափակությունը գործնականում հանգեցնում է երիտասարդության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ համայնքին և Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների անբավարար իրականացման, արհեստականորեն խոչընդոտում է Երևան համայնքում երիտասարդության ոլորտի համակարգմանը և զարգացմանը։ Չնայած դրան, վերջին երկու տարիների ընթացքում երիտասարդության ոլորտում մեկնարկել և առաջին անգամ հաջողությամբ իրականացվում են նպատակային ծրագրերի ուսումնասիրություններ, վերլուծություններ, իրականացվում են ոլորտային միջոցառումներ, ստեղծվել և քաղաքապետարանի հետ սերտորեն համագործակցում է Երևանի քաղաքապետին կից Երիտասարդության հարցերի խորհուրդը։

Երիտասարդների հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և երիտասարդության հարցերի բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված Երևանի քաղաքապետի լիազորություններն արդյունավետորեն իրականացնելու նպատակով առաջարկվում է ձևավորել առանձնացված բաժին, որին,

համաձայն մշակված կանոնադրության նախագծի, կվերապահվեն հետևյալ հիմնական գործառույթները՝

- մշակել և իրականացնել Երևան քաղաքի տեղական երիտասարդական քաղաքականությունը և երիտասարդության հարցերի բնագավառում Երևան քաղաքի զարգացման ամենամյա և հնգամյա ծրագրերը

- ապահովել երիտասարդական ծրագրերի և միջոցառումների տարեկան օրացուցային պլանի մշակումը և իրականացումը

- տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում ներգրավել ֆինանսական միջոցներ երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով

- մշակել բաժնի ենթակայության տակ գտնվող երիտասարդական կենտրոնների և կազմակերպությունների ցանցի զարգացման, Երևան քաղաքի տարածքում նոր երիտասարդական կենտրոնների ստեղծման ծրագրեր, համակարգել դրանց աշխատանքը

- կազմակերպել Երևան քաղաքի երիտասարդության հարցերի բնագավառի խնդիրներին առնչվող համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ և ոլորտի զարգացմանը միտված այլ բնույթի միջոցառումներ

- կազմակերպել համաքաղաքային երիտասարդական հանրային միջոցառումներ

- համագործակցել երիտասարդական նախաձեռնությունների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ, համակարգել և կազմակերպել Երևանի քաղաքապետին կից Երիտասարդության հարցերի խորհրդի աշխատանքները:

Նորաստեղծ բաժնի առաջնահերթ խնդիրներից կլինի Երևանի երիտասարդների կարիքների վերաբերյալ համապարփակ հետազոտության իրականացումը, որի արդյունքում կսահմանվեն երիտասարդության ոլորտում բաժնի կողմից պլանավորվող և իրականացվող ծրագրերի թեմատիկ աշխատանքային ուղղությունները: Անհրաժեշտ է նաև գնահատել և ուսումնասիրել ոլորտում կատարված նախկին աշխատանքները, կատարել գույքագրում: Հետազոտության տվյալների հիման վրա կմշակվի և Երևանի ավագանու հաստատմանը կներկայացվի Երևան քաղաքի երիտասարդական քաղաքականության 5-ամյա ռազմավարությունը: Ռազմավարության հիման վրա բաժինը կմշակի դրա

իրականացմանն ուղղված ճանապարհային քարտեզը: Յուրաքանչյուր տարվա ավարտին բաժինը կիրականացնի կատարված ծրագրերի գնահատում, ինչը թույլ կտա հասկանալ և տեսանելի դարձնել առաջընթացը, մատնանշել աշխատանքային բացերը և աշխատանքների բարելավման ուղղությունները: Այսպիսով Երևան համայնքում կդրվեն երիտասարդական ենթակառուցվածքների զարգացման հիմքերը:

Ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու պահանջն առաջացել է նաև երիտասարդության ոլորտի դինամիկ զարգացման արդյունքում, մասնավորապես՝ պետական և համայնքային մակարդակներում նախատեսվող ծրագրերի նպատակային և արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով: Մասնավորապես,

1. Առաջիկայում ՀՀ կառավարությունը նախատեսում է ընդունել ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ ռազմավարությունը, որի առաջնային նպատակներից է ժամանակի պահանջներին և արդի մարտահրավերներին համապատասխանեցնել երիտասարդական ոլորտի քաղաքականությունը և ծրագրերը: Ռազմավարության նախագծում կարևորագույն դեր է վերապահվում տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնցից ակնկալվում է տեղական ինքնակառավարմանը, տեղական մակարդակում երիտասարդների ներգրավման խթանում՝ մեթոդաբանության մշակման միջոցով, մասնագետների վերապատրաստմամբ, համայնքներին կից երիտասարդական խորհուրդներին աջակցության տրամադրմամբ և տեղական երիտասարդական քաղաքականությունների մշակման աջակցությամբ: Նախատեսվում է նաև աջակցել համայնքային երիտասարդական կենտրոնների ձևավորմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի կառուցվածքում խորհրդատվական կամ որոշումների կայացմանը մասնակցող մարմնի ձևավորմանը, որը, համաձայն իր կանոնադրության, կապահովի երիտասարդների ինստիտուցիոնալ մասնակցությունը տվյալ մարմնի գործունեության շրջանակներում որոշումների կայացման գործընթացներին: Այս առումով շատ կարևոր է, որ Երևան համայնքը պատրաստ լինի դառնալ այս գործընթացների առաջամարտիկ և ակտիվ մասնակից ու ավելացնի իր դերակատարումը համայնքի երիտասարդների կյանքում, ինչը գործող կառուցվածքի պայմաններում անհնար է:

2. 2021 թվականի հունիս - օգոստոս ժամանակահատվածում ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ «UN RCS-COVID MPFT» ծրագրի շրջանակներում իրականացվել է

նաև Երևանի համայնքային 14 մանկապատանեկան կենտրոնների և մշակույթի տների գործունեության ուսումնասիրություն, որի արդյունքում առաջարկվել է իրականացնել նշված կենտրոնների բարեփոխման համալիր ծրագիր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նշված կազմակերպությունները վերափոխել պատանեկան և երիտասարդության կենտրոնների, իսկ դրանց գործունեության կազմակերպման գործառույթը վերապահել Երևանի քաղաքապետարանի երիտասարդության հարցերի բաժնին, ինչը գործող կառուցվածքի պայմաններում անհնար է:

Ելնելով վերոշարադրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ